



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2010թ. ընթացքում Ստանդարտների ազգային
ինստիտուտի կողմից իրականացված տարեկան
գործունեության վերաբերյալ

Տնօրեն՝ ԵՆՈՔ ԱԶԱՐՅԱՆ

Պատրաստված է՝ փետրվար, 2011



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	2
1.1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐ	2
1.2. ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	3
1.3. ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	4
2. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ 2010Թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	8
2.1 ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ	8
2.2 ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	10
2.3 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	11
2.4 ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՈՒՄ	13
2.5 ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	16
3. ԻՆՍՏԻՏՈՒՑԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ 2010Թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	19
3.1 ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ	19
3.2 ՍՆՆԴԻ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ	19
3.3 ՆԱԿԹԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ	20
4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ 2010Թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	22
4.1 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	24
4.2 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ	25
5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	26
6. ԻՆՍՏԻՏՈՒՑԻ 2010Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	28

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից 2010թ. ընթացքում իրականացված տարեկան գործունեության վերաբերյալ

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ինստիտուտ) գործունեությունն ընդգրկում է 4 հիմնական ոլորտներ՝ ստանդարտացման աշխատանքներ, համապատասխանության հավաստման, այդ թվում՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներ, լաբորատոր փորձարկումներ և ուսուցման կազմակերպում: Սույն հաշվետվությունն ընդգրկում է նշված ոլորտներում Ինստիտուտի կողմից 2010թ. հունվարի 1-ից մինչև 2011թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեությունը, Ինստիտուտի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերափոխումների և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:

1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կառուցվածքը և հաստիքացուցակը ենթարկվեցին զգալի փոփոխությունների, որոնք ուղղված էին ընկերության գործունեության արդյունավետության բարձրացմանը, անհարկի հաստիքների և աշխատավարձին ուղղվող ծախսերի կրճատմանը: 2010թ. ընթացքում հաջողվեց պահպանել Ինստիտուտի աշխատողների աշխատավարձերի սահմանված մակարդակը, չնայած համախառն եկամտի մակարդակի զգալի կրճատմանը: Նպատակ դրվեց կառուցվածքային բարելավման և հաստիքացուցակի վերանայման միջոցով ապահովել աշխատավարձերի բարձրացում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 03.05.2010թ. թիվ 316-Ա հրամանով հաստատվեց Ինստիտուտի նոր կառուցվածքը և հաստիքացուցակը: Դրանով, մասնավորապես ՀՀ էկոնոմիկայի նախարարի նախկին 26.10.2009թ. թիվ 894-Ա հրամանով հաստատված 152 հաստիքի փոխարեն սահմանվեց 133 հաստիք: Աշխատանքից ազատվեցին կառուցվածքային փոփոխության արդյունքում դուրս մնացած հաստիքների աշխատողները՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները: Կառուցվածքի բարելավումը թույլ տվեց նաև կարգավորել աշխատավարձերի մակարդակը՝ սահմանելով աշխատավարձի խելամիտ մակարդակներ: Այսպես, աղյուսակ 1-ում բերված միջին ամսական աշխատավարձի և աշխատողների միջին թվաքանակի դինամիկան վկայում են, որ անցած երեք տարիների ընթացքում իրականացված շարունակական ինստիտուցիոնալ վերափոխումները հանգեցրել են աշխատողների թվաքանակի կրճատմանը և միջին աշխատավարձի բարձրացմանը:

**Ինստիտուտի աշխատողների միջին թվաքանակի և միջին աշխատավարձի
2008-2010թթ. դինամիկան**

		2008	2009	2010
1.	Աշխատողների միջին թվաքանակ, մարդ	230	167	156
2.	Միջին աշխատավարձ, դրամ	85000	96420	114400

Հաշվետու եռամսյակում Ինստիտուտն աշխատանքներ է իրականացրել կադրային ու փաստաթղթաշրջանառության գործունեության կազմակերպման ոլորտում, ինչը կապված էր ընկերության վերակազմավորման աշխատանքների հետ:

Մշակվել և հաստատվել են բոլոր հաստիքների նոր պաշտոնեական հրահանգները և բոլոր ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերը: Մշակվել և հաստատվել են նաև Ինստիտուտի ներքին կարգապահական կանոնները և Ինստիտուտում փաստաթղթաշրջանառության կարգը:

1.2. ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2010թ. գարնանը (մարտին) ուժեղ քանուց վնասվել էր Ինստիտուտի Երևան, Կոմիտաս 49/2 հասցեում գտնվող գլխամասային շենքի տանիքը, որը ենթարկվել է վերանորոգման: Հաշվի առնելով ՀՀ հավատարմագրման խորհրդի 2009թ. դեկտեմբերի 26-ի նիստի ընթացքում ներկայացված դիտողությունները և այդ նիստի N5 արձանագրությունը, բարեկարգվել ու վերանորոգման են ենթարկվել Հ.Էմինի փող. 31ա հասցեում գտնվող Ֆիզիկաքիմիական և նավթամթերքի փորձարկման լաբորատորիաները՝ ամրացվել և վերանորոգվել է շենքի տանիքը, լաբորատոր սարքավումները միացվել են հողանցման կոնտուրին: Ամբողջությամբ վերանորոգվել և վերազինվել է Գյումրու մասնաշենքում գտնվող փորձարկման լաբորատորիայի մոտ 100ք.մ. տարածքը:

Մասնակի վերանորոգման է ենթարկվել Կոմիտասի 49/2 շենքի աստիճանավանդակների տարածքը՝ հրդեհային անվտանգության ապահովման նպատակով: Միաժամանակ, ՀՀ ոստիկանության Պետական ունեցվածքի պահպանման ծառայության հետ կնքված պայմանագրով նրանց հսկողությանն է հանձնվել Կոմիտասի 49/2 գլխավոր մասնաշենքի պահպանությունը:

Ի կատարումն ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2010 թվականի ապրիլի 21-ի N297-Ա հրամանի, ապահովվել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ հաշվեկշռից «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հաշվեկշռին վերջինիս կողմից տարիներ շարունակ փաստացի օգտագործվող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:

Հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Առևտրի և տնտեսական զարգացման նախարարի միջև ստորագրված համագործակցության հուշագրի պահանջները, աջակցության շրջանակներում Ինստիտուտի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստանդարտացման կոմիտեին նվիրաբերվել են շուրջ 3 մլն. դրամի լաբորատոր սարքավորումներ և համակարգիչներ, ինչպես նաև ՎԱԶ 21-07 մակնիշի ավտոմեքենա: Վերջինիս փոխարեն «Եվրովագեն» ընկերությունից ձեռք է բերվել տեխնիկապես անթերի նոր ավտոմեքենա:

2010թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում տնօրենի հրամանով իրականացվեցին Ինստիտուտի ակտիվների և պարտավորությունների ամբողջական գույքագրման աշխատանքները, ինչի շնորհիվ հստակեցվեց Ինստիտուտի գույքի կազմը, բացահայտվեց չօգտագործվող և/կամ դուրս գրման ենթակա գույքը:

1.3. ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Բացի ընթացիկ գործունեությունից, հաշվետու ժամանակաշրջանի ձեռք բերումներ կարելի է համարել, մասնավորապես, փորձագետների թեստավորման քննությունների համակարգչային ծրագրի զգալի բարելավումը և նոր տվյալների համալրումը, համապատասխանության հավաստման և ձևակերպման նոր համակարգչային ԻՊՍ-ստանդարտ ծրագրի համալրումը և ինտերնետի երկու այլընտրանքային կապով ապահովումը:

Ինստիտուտի գործունեության քարոզման, ինչպես նաև միջազգային ստանդարտացման կառույցներում Ինստիտուտի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով պատվիրվել և նկարահանվել է Ֆիլմ Ստանդարտների ազգային ինստիտուտի գործունեության մասին: Ֆիլմը հայերեն և անգլերեն լեզուներով հնչյունավորված է: Ֆիլմը տարբեր միջոցառումների ժամանակ արդեն իսկ տրամադրվել է մի շարք երկրների Ստանդարտների ազգային ինստիտուտներին և ստանդարտացման միջազգային կազմակերպություններին:

2010թ. ընթացքում ապահովվել է ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2009թ. մայիսի 4-ի թիվ 12/4 որոշման հիման վրա «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում իրականացված վերահսկողության արդյունքներով հայտնաբերված բոլոր խախտումների ու թերությունների վերացումը:

2010թ. ընթացքում ապահովվել է Ինստիտուտի շահերի ներկայացումը երկու քաղաքացիական գործով՝ Երևանի և Շիրակի մարզի դատական ատյաններում: Մասնավորապես, քաղաքացիական գործով պատրաստվել է հայցադիմում ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության՝ գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ, որը առաջացել է ծառայության վճարը չտրամադրելու հետևանքով: Այդ գործին մասնակցում է նաև ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ որպես երրորդ անձ, որը մերժել է ֆինանսավորման տրամադրումը: Արդեն իսկ հրավիրվել է մեկ դատական նիստ և ընթացքը շարունակելի է:

Մյուս գործը վերաբերում է Գյումրու քաղաքապետարանին, որը տարիներ շարունակ ապօրինաբար զբաղեցրել է Ինստիտուտի Գյումրու մասնաշենքը և ներկայումս հրաժարվում է հաշվարկված վարձավճարի վճարումից: Պարտապանի հետ տեղի է ունեցել բանակցային գործընթաց, ինչը որևէ արդյունք չի տվել: Ավելին, Գյումրու քաղաքապետարանը ժամանակ շահելու պատրվակով անհիմն հակընդդեմ հայցապահանջ է ներկայացրել՝ գույքահարկի և հողի հարկի պահանջներով: Ինստիտուտի կողմից պատասխան և միջնորդություն է ներկայացվել կասեցման համար, ընթացքը շարունակելի է:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2010թ. ապրիլի 9-ի N266-Ա հրամանով ստեղծված աշխատանքային խմբի անդամները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ՀՀ որակի ենթակառուցվածքի բարեփոխումների ռազմավարության մշակման աշխատանքներին: Մասնավորապես, ուսումնասիրվել է ստանդարտացման մարմինների գործունեության և

ստանդարտացման ոլորտի օրենսդրության միջազգային փորձը, որն իր արտացոլումն է գտել ՀՀ որակի ենթակառուցվածքի բարեփոխումների ռազմավարության մեջ:

ԵՄ Էսոթրիդատվական խմբի փորձագետների կողմից մշակվել են ստանդարտացման մասին նոր օրենքի նախագծի հիմնական դրույթները՝ առանց ստանդարտացման մարմնի ինստիտուցիոնալ կառուցվածքի, գործունեության և ֆինանսավորման վերաբերյալ դրույթների, որոնք 2010թ. հուլիսին նախնական ձևաչափով ներկայացվել և քննարկվել են աշխատանքային խմբի շրջանակներում:

Այդուհանդերձ, ստանդարտացման մասին նոր օրենքի ամբողջական նախագծի մշակումը պայմանավորված է քաղաքականության մի շարք խնդիրների հստակեցման հետ, որոնց իրավական առումով սահմանումը պահանջում է օրենքի նախագծի մշակման աշխատանքներին շահագրգիռ կողմերի ավելի լայն շրջանակի ներգրավում: Քաղաքականության հետ կապված մոտեցումները սահմանվեցին ՀՀ կառավարության 16.12.2010թ. N 1693-Ն որոշմամբ հաստատված ՀՀ որակի ենթակառուցվածքի բարեփոխումների ռազմավարությամբ, որից հետո առաջիկայում հնարավոր կլինի ամբողջապես ավարտել ստանդարտացման մասին օրենքի նախագծի մշակումը և ներկայացնել քննարկման: Նշված նկատառումներից ելնելով օրենքի նախագծի նախնական տարբերակը հնարավոր կլինի ներկայացնել շահագրգիռ կողմերի քննարկմանը 2011թ. փետրվար-մարտ ամիսներին:

2010թ. մարտի 11-ին Ստանդարտների ազգային ինստիտուտ այցելեց Երևանի քաղաքապետ պարոն Գագիկ Բեգլարյանը: Այցի հիմնական նպատակն էր քննարկել Ստանդարտների ազգային ինստիտուտի և Երևանի քաղաքապետարանի համագործակցության հիմնական ուղղությունները՝ Երևան քաղաքի տարբեր խնդիրների կարգավորման ուղղությամբ:

Ինստիտուտն անցած 3-4 տարիների ընթացքում մշակել է մի շարք տեխնիկական իրավական ակտերի նախագծեր, որոնք հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և զգալիորեն նպաստել են Երևան քաղաքում առկա մի շարք խնդիրների կարգավորմանը: Օրինակ, Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերում շահագործվող վերելակների անվտանգության պահանջների սահմանման նպատակով Ինստիտուտը շահագրգիռ կողմերի մասնակցությամբ մշակել է «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների վերաբերյալ» տեխնիկական կանոնակարգը, որը գործում է 2007թ.-ից: Մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների էկոլոգիական անվտանգության» տեխնիկական կանոնակարգը, որի կիրառումը նպաստում է ավտոմեքենաներից վնասակար արտանետումների նվազեցմանը:

Ներկայումս մշակման փուլում է գտնվում նաև «Էլեկտրական լուսավորությանը ներկայացվող պահանջների վերաբերյալ» տեխնիկական կանոնակարգը, որը կնպաստի Երևան քաղաքում և այլ վայրերում ներքին և արտաքին էլեկտրական լուսավորության ցանցերի նախագծմանը, կառուցմանը, տեխնիկական և անվտանգ շահագործմանը, էներգա-արդյունավետ լուսատուների կիրառմանը՝ միջազգային նորմերին և պահանջներին համապատասխան:

Երևանի քաղաքապետի հետ քննարկվեցին համագործակցության հնարավորությունները՝ Երևան քաղաքում և քաղաքապետարանի համակարգում գործող կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման համար: Առաջարկվեց նպաստել այդ կազմակերպություններում միջազգային մեծ համբավ ունեցող և շատ կարևոր որակի և էկոլոգիական կառավարման համակարգերի ներդրմանը և հնարավոր սերտիֆիկացմանը: Մասնավորապես, որակի կառավարման համակարգերը (ԻՍՕ 9001) նպաստում են կազմակերպության շահութաբերության բարձրացմանը և որակյալ ապրանքների ու ծառայությունների ստեղծմանը: Իսկ էկոլոգիական կառավարման համակարգերի ներդրումը (ԻՍՕ 14001) էապես կկարգավորի քաղաքի էկոլոգիական իրավիճակը, քանի որ աղտոտող կազմակերպություններում շարունակաբար կբարելավվի օդի, ջրային և հողային ռեսուրսների աղտոտման կառավարումը:

Առաջարկվեց նաև ԻՍՕ 14001 համակարգը ներդնել Երևան քաղաքի համար, հետևելով այնպիսի խոշոր քաղաքների փորձին, ինչպիսիք են օրինակ Մեխիկոն, Դալասը, Քալգրին և այլն, որտեղ այդ համակարգի շնորհիվ նվաճվել են լուրջ տնտեսական և էկոլոգիական օգուտներ:

2010թ. մարտի 25-ից 26-ը Ստանդարտների ազգային ինստիտուտի և Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) կողմից Երևանում կազմակերպվեց սեմինար նվիրված ԻՍՕ 26000 «Սոցիալական պատասխանատվության ուղեցույց» միջազգային ստանդարտի լուսաբանմանը և քննարկմանը:

Սեմինարին մասնակցում էին 40 հոգի՝ շուրջ 30 կազմակերպությունից: Top of Form

Սեմինարը վարում էր Ավստրիայից ժամանած ԻՍՕ-ի տեխնիկական կառավարման բյուրոյի սոցիալական պատասխանատվության աշխատանքային խմբի 6-րդ տեխնիկական խմբի պատասխանատու պրն. Մարտին Նեուրեյթերը:

Կազմակերպությունների կայուն գործունեության համար անհրաժեշտ է ոչ միայն ապահովել սպառողի պահանջները բավարարող արտադրանք և ծառայություն և չվտանգել շրջակա միջավայրը, այլ նաև գործել սոցիալապես պատասխանատու ձևով: Նման գործելակերպը պարտադրվում է գնորդի, սպառողի, կառավարության, միությունների և հասարակության կողմից: Միևնույն ժամանակ կազմակերպության հեռատես ղեկավարները հասկանում են, որ շարունակական հաջողությունը պետք է հիմնվի վստահելի բիզնես փորձի և այնպիսի գործողությունների կանխման վրա, ինչպիսիք են սխալ հաշվարկը և աշխատուժի շահագործումը: Մի կողմից եղել են ՍՊ-ի սկզբունքների վերաբերյալ հայտարարություններ, մյուս կողմից կան բազմաթիվ անհատական ՍՊ ծրագրեր և նախաձեռնություններ: Խնդիրն այն է, թե ինչպես գործնականում կիրառել այդ սկզբունքները և ապահովել սոցիալական պատասխանատվության արդյունավետ ներդրումն այն դեպքում, երբ նույնիսկ «սոցիալական պատասխանատվություն» հասկացությունը կարող է տարբեր ծրագրերում տարբեր կերպ ընկալվել: Նախորդ նախաձեռնությունները կենտրոնացած են եղել «կորպորատիվ սոցիալական պատասխանատվության» վրա, մինչդեռ ԻՍՕ 26000 ստանդարտը կապահովի ՍՊ ուղեցույց ոչ միայն բիզնես կազմակերպությունների, այլ նաև հանրային ոլորտի կազմակերպությունների համար: ԻՍՕ 26000 ստանդարտը կբացահայտի «սոցիալական պատասխանատվություն» հասկացության համապարփակ նշանակությունը և կօգնի

կազմակերպություններին որոշել այն գործողությունները, որոնք ուղղված են սոցիալական պատասխանատվության ապահովմանը:

Սեմինարի նպատակն էր.

- ԻՍՕ 26000 ստանդարտի մասին ընդհանուր պատկերացման և «սոցիալական պատասխանատվություն» հասկացության ընկալման ապահովումը (ստանդարտի հայեցակարգերը և կարևորությունը),
- Հայաստանի կազմակերպությունների համար ստանդարտի բովանդակության քննարկումը,
- հետագա քայլերի մշակումը և շահագրգիռ կողմերի կողմից ստանդարտի ճիշտ ընկալումը, ինչպես նաև ռազմավարության մշակումը սոցիալական պատասխանատվության համար:

Սեմինարի ընթացքում քննարկվեցին մի շարք հարցեր՝ կապված սոցիալական պատասխանատվության հայեցակարգին ինտեգրման առավելությունների հետ: Մասնավորապես, ԻՍՕ 26000 ստանդարտը կօգնի բոլոր տեսակի կազմակերպություններին, անկախ դրանց չափից, գործունեությունից և տեղից, գործելու սոցիալապես պատասխանատու ձևով՝ ապահովելով ցուցումներ հետևյալի վերաբերյալ.

- սոցիալական պատասխանատվությանը վերաբերող հասկացությունների,
- սոցիալական պատասխանատվության նախադրյալների, ուղղվածության և առանձնահատկությունների,
- սոցիալական պատասխանատվության սկզբունքների և մեթոդների,
- սոցիալական պատասխանատվության հիմնական հարցերի և խնդիրների,
- կազմակերպությունում սոցիալապես պատասխանատու վարքագծի ինտեգրման, ներդրման և խթանման,
- դրա ազդեցության ոլորտի,
- շահագրգիռ կողմերի ներգրավման:

Սեմինարի ընթացքում տեղի ունեցան բազմաթիվ ակտիվ քննարկումներ, մասնակիցներին տրվեցին գործնական առաջադրանքներ և կազմված խմբերում համապատասխան քննարկումից հետո ներկայացվեցին տեսակետներ կազմակերպություններում սոցիալական պատասխանատվության հայեցակարգի ներդրման վերաբերյալ:

Հեղինակավոր «Top Ten Award» կազմակերպությունը ՋիԱյՍի/GIC (Guardian Independent Certification) կազմակերպության հետ համատեղ 2010թ. հուլիսի 27-ին Թբիլիսիում կազմակերպել էր մրցանակաբաշխություն և ԻՍՕ 9001:2008 ՄՍ պահանջով սեմինար, որոնց մասնակցեց Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ:

«Թոփ Թեն Ավարդ»-ի գործունեության նպատակն է հասարակության համար աշխատանքների կազմակերպման գործընթացում լավագույն կազմակերպությունների բացահայտումը:

Ի թիվս այլոց, Ստանդարտների ազգային ինստիտուտը միջազգային ստանդարտացման քաղաքականության մեջ զգալի հաջողությունների հասնելու, միջազգային

ստանդարտացման քաղաքականության մեջ դրական ազդեցություն ունենալու, ինչպես նաև իր կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման ու դրանց որակի կառավարման արդյունավետ մեթոդների ներդրմանն աջակցելու և խթանելու համար արժանացավ «Թուփ Թեն Ավարդ» մրցանակի:

Նախատեսվում է 2012թ. «Թուփ Թեն Ավարդ» մրցանակաբաշխությունն անցկացնել Հայաստանում: Նման մրցանակաբաշխության անցկացումը նպատակ ունի բացահայտելու միջազգային շուկայում տեղական մրցունակ արտադրողին, ինչը խթան կհանդիսանա ապրանքների, ծառայությունների որակի բարձրացման համար:

2. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ 2010Թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2.1 ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կառավարության կողմից հաստատման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարին էր ներկայացվել Ստանդարտների ազգային ինստիտուտի 2010թ. ստանդարտացման ծրագիրը: Տարվա սկզբից ստանդարտացման ծրագրի և պետական պատվերի շրջանակներում նախատեսված էր իրականացնել շուրջ 14 մլն դրամի աշխատանքներ՝ նախորդ տարվա 18 մլն դրամի փոխարեն: Չնայած դրան, Ինստիտուտը 2010 թվականի ընթացքում ամբողջությամբ կատարել է ՀՀ կառավարության 2010թ.-ի ապրիլի 29-ի N651-Ն որոշմամբ հաստատված ստանդարտացման ծրագրով նախատեսված ստանդարտների մշակման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է 52 ազգային ստանդարտ և 1 ազգային ստանդարտի փոփոխություն, որոնք ընդունվել են Ինստիտուտի գիտխորհրդի կողմից և գործողության մեջ են դրվել ՀՀ տարածքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության N458-Ա առ 17.06.2010թ., N619-Ա առ 09.08.2010թ., N795-Ա առ 29.09.2010թ. և N 1047-Ա առ 17.12.2010թ. հրամաններով:

Մշակված ստանդարտների 86%-ը ներդաշնակեցված են միջազգային «ԻՍՕ» և եվրոպական «ԵՆ» ստանդարտներին: Ստանդարտները մշակվել են թարգմանության եղանակով, որոնց համապատասխանության աստիճանը միջազգային և եվրոպական ստանդարտների հետ նույնական է: Համեմատության համար, 2009 թվականին ըստ ստանդարտացման ծրագրի մշակվել էր 53 ստանդարտ, որոնց ներդաշնակեցման մակարդակը կազմում էր 75%:

2010 թվականին մշակված ստանդարտների կիրառումը կաջակցի՝

- արտադրանքի անվտանգության ապահովմանը սպառողական շուկայում,
- ինովացիոն տեխնոլոգիաների ներդրմանը արտադրական գործընթացում,
- արտադրանքի որակի և մրցունակության բարձրացմանը,
- գործարարներին հայրենական արտադրանքի արտահանման գործընթացում,
- Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարմանը:

Հաշվետու ժամանակահատվածում շինարարական ապակիների տեխնիկական կանոնակարգի պահանջներն ապահովելու նպատակով մշակվել են 17 ազգային

ստանդարտներ, որոնք ներդաշնակեղված են 6 միջազգային (ԻՍՕ) և 11 եվրոպական (ԵՆ) ստանդարտներին:

Մշակվել են մրգային ու բանջարեղենային և դրանց մշակումից ստացվող մթերքներում թունավոր տարրերի որոշման մեթոդների ժամանակակից ազգային ստանդարտներ, որոնց կիրառումը կնպաստի հյութերի և հյութամթերքների տեխնիկական պահանջների կատարմանը և տվյալ մթերքների անվտանգության պահպանմանը:

2010 թվականին մշակվել են ԻՍՕ միջազգային ստանդարտներին ներդաշնակ 15 ազգային ստանդարտներ՝ խմելու ջրի քիմիական տարրերի որոշման փորձարկման մեթոդներ, որոնց կիրառումը կնպաստի շալցված հանքային ջրերի և բնական աղբյուրի ջրերի տեխնիկական կանոնակարգի պահանջների և նորմերի կատարմանը: Նշված թեմայով ստանդարտների մշակման աշխատանքները ավարտվել են 4-րդ եռամսյակում և կազմակերպվել է դրանց ընդունման և գործարկման աշխատանքները:

4-րդ եռամսյակում ավարտվել է կաթի և կաթնամթերքի 7 ազգային ստանդարտի նախագծերի մշակումները, որոնք վերաբերվում են դրանց փորձարկման մեթոդներին: Կազմակերպվել է ջրի և կաթնամթերքի վերաբերյալ ստանդարտների քննարկումը համապատասխան տեխնիկական հանձնաժողովներում և նախապատրաստվել է դրանց ընդունումը գիտատեխնիկական խորհրդում:

2010 թվականին մշակվել է տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգում կիրառվող տերմինների և հիմնական հասկացությունների վերաբերյալ հիմնադրական ազգային ստանդարտ: Ստանդարտը ներդաշնակեցված է ԻՍՕ/ԻԷԿ 27000:2008 ստանդարտի հետ: Նշված ազգային ստանդարտի կիրառումը կապահովի տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի արդյունավետ ներդրումը ՀՀ պետական կառավարման մարմիններում և կազմակերպություններում:

Մշակվել է ՀՍ «Բեռների մակնշում» ազգային ստանդարտի նախագծի վերջին խմբագրությունը, որը նախապատրաստվում է ներկայացնել գիտատեխնիկական խորհրդին: Ստանդարտի նախագիծը սահմանում է միջազգային պահանջներին ներդաշնակ փոխադրվող բեռների վրա վարվելակարգային նշանները և դրանց անվանումները հայերեն:

Եվրոպական ԵՆ 1262:2003 ստանդարտի պահանջներին համապատասխան մշակվել է «Մակերևութաակտիվ նյութեր. Լուծույթների կամ դիսպերսիաների pH-ի որոշում» ազգային ստանդարտի նախագծի առաջին խմբագրությունը: Ստանդարտի կիրառումը կապահովի մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը:

Մենդի ապահովման ծառայությունների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման նպատակով մշակվել է հանրային սննդի որակի գնահատման զգայորոշական մեթոդի ազգային ստանդարտի նախագծի առաջին խմբագրությունը:

Մշակված կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգի ազգային ստանդարտները կօգնեն նախագծող կազմակերպություններին կոնստրուկտորական փաստաթղթերը ձևակերպել էլեկտրոնային տարբերակով՝ հայերենով:

Ինստիտուտի համապատասխան մասնագետները մասնակցել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացրած ՀՍ «Աշխատանքի անվտանգության

ստանդարտների համակարգ. Լուսայումինեսցենտային տարահանման համակարգեր. Պահանջներ և հսկման մեթոդներ» ստանդարտի նախագծի մշակման աշխատանքներին:

Կազմակերպվել է 2010 թվականի ստանդարտացման ծրագրում ընդգրկված և ՏՀ 1 «Էներգետիկա» հանձնաժողովի կողմից ներկայացրած 7 ազգային ստանդարտների մշակման աշխատանքները, որոնք ընդունվել են գիտատեխնիկական խորհրդի կողմից:

2010 թվականին մշակվել է լրացուցիչ 2 ազգային ստանդարտ և 1 ազգային ստանդարտի փոփոխություն:

2.2 ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

2010 թվականին զգալիորեն ակտիվացել են ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքները: Ներկայումս գործում է 11 ստանդարտացման տեխնիկական հանձնաժողով: Ի կատարումն ՀՀ էկոնոմիկայի նախարարի սեպտեմբերի 15-ի N 742-Ա հրամանի, կատարվել են կազմակերպչական աշխատանքներ ստանդարտացման նոր տեխնիկական հանձնաժողովներ ձևավորելու նպատակով, որի արդյունքում ստեղծվել է ՏՀ 10 «Ալկոհոլային խմիչքներ» և ՏՀ 11 «Ծխախոտ և ծխախոտային արտադրանք» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները (Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենի 29.09.2010 N53-Վ և N54-Վ հրամանները): Այդ հանձնաժողովների նպատակն է ուսումնասիրել և գնահատել ալկոհոլային խմիչքների և ծխախոտի ցուցանիշների համար միջազգային նորմերի և դրանց փորձարկման մեթոդների կիրառման հնարավորությունները ՀՀ-ում, ինչպես նաև միջազգային փորձարկման մեթոդների կիրառումը ազգային ստանդարտների կարգավիճակով:

2010թ.-ին վերակազմավորվել է 3 ստանդարտացման տեխնիկական հանձնաժողով՝ ՏՀ 4 «Կաթ և կաթնամթերք», ՏՀ 6 «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» և ՏՀ 8 «Զրի որակ»:

Ինստիտուտի կողմից կազմակերպվել են գործող հանձնաժողովների նիստերը, որոնցում քննարկվել են ստանդարտների նախագծերը և ստանդարտացման ծրագրերը (ներդաշնակեցման 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը և ստանդարտացման ծրագիրը):

Նշված Ծրագրերի նախագծերը կազմելու նպատակով Ինստիտուտը ակտիվ համագործակցել է ՏՀ 1 «Էներգետիկա», ՏՀ 7 «Հակասեյսմիկ սարքավորանք», ՏՀ 9 «Քիմիական արտադրանք» և ՏՀ 5 «Գազամատակարարում» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների հետ:

2010թ.-ի վերջում իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ նոր ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների ստեղծման համար՝ ՏՀ «Հեռահաղորդակցություն», ՏՀ «Ճանապարհային տրանսպորտ», ՏՀ «Որակի կառավարում և համապատասխանության հավաստում», ՏՀ «Ֆինանսական ծառայություններ» և ՏՀ «Շրջակա միջավայրի պաշտպանություն»:

2.3 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ հունիսի 1-2-ը մասնակցեց Մալթայում կազմակերպված ՍԵՆ-ի 36-րդ և ՍԵՆ-ՍԵՆԵԼԵԿ-ի 6-րդ ամենամյա վեհաժողովի աշխատանքներին: Զեկույցները և փորձագիտական քննարկումները նպատակաուղղված էին վերանայելու Եվրոպական ստանդարտացման զարգացումը անցած տասնամյակում և դրա հարմարվողականությունը ծագող մարտահրավերներին՝ մինչև 2020 թվականը նվաճման ենթակա Եվրոպայի կողմից սահմանված նպատակներին հաջողությամբ արձագանքելու առումով: Քննարկումների այդպիսի ուղղվածության ընտրությունը պայմանավորված էր «Լիսաբոնի Օրակարգի» կամ «Լիսաբոնի Ռազմավարության» իրականացման արդյունքների քննարկմամբ:

Ի տարբերություն այլ ոլորտների համար Լիսաբոնի օրակարգով սահմանված նպատակների ձախողմանը, ստանդարտացումն, այդուհանդերձ, արձանագրել է զգալի նվաճումներ: Վեհաժողովի ընթացքում քննարկվեցին Եվրոպական ստանդարտացման ապագայի վերաբերյալ քաղաքականություն մշակողների բազմաթիվ ընթացիկ նախաձեռնությունները և դրանց վերաբերյալ ստանդարտացման կառույցների արձագանքները:

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը մի շարք հանդիպումներ ունեցավ Եվրոպական ստանդարտացման կառույցների ղեկավարների հետ, որոնց ընթացքում քննարկվեցին համագործակցության ակտիվացման խնդիրները:

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ 2010 թվականի սեպտեմբերի 13-18 մասնակցեց Նորվեգիայի Օսլո քաղաքում տեղի ունեցած ԻՍՕ-ի՝ Ստանդարտացման Միջազգային Կազմակերպության 33-րդ վեհաժողովին:

ԻՍՕ-ի 33-րդ վեհաժողովը Ստանդարտների ազգային ինստիտուտի համար նշանավորվեց ԻՍՕ-ի Խորհրդում 2011-2012թթ. ժամկետով ընտրվելու հանգամանքով: Հարկ է նշել, որ այդ ընտրությունը դյուրին չէր: Այդ աշխատանքները սկսվել էին դեռևս 2009թ. սկզբներին: Բազմաթիվ հանդիպումներ, բանակցություններ, Ինստիտուտի աշխատանքների ներկայացում, միջազգային շփումների ակտիվացում, միջազգային ստանդարտացման աշխատանքներում Հայաստանի դերի բարձրացում և այլն: Արդյունքում, հիմնվեցին ամուր կապեր գրեթե բոլոր երկրների հետ:

Այս բոլոր աշխատանքների շնորհիվ Հայաստանը ներկայումս զգալիորեն բարձր վարկանիշ ունի միջազգային ստանդարտացման ասպարեզում: Թերևս դրանով էլ հենց պայմանավորված էր հաշվետու տարվա հաջողությունը և ընտրությունը ԻՍՕ-ի Խորհրդի կազմում:

ԻՍՕ-ի Խորհուրդը, ԻՍՕ-ի գլխավոր ասամբլեայից հետո ԻՍՕ-ի երկրորդ վերադաս ղեկավար մարմինն է, որը գումարվում է տարեկան երկու կամ երեք անգամ, որպեսզի քննարկի և որոշում կայացնի ԻՍՕ-ի աշխատանքների ռազմավարական ուղղությունների վերաբերյալ: Այն նաև որոշումներ է ընդունում ԻՍՕ-ի ղեկավարման ֆինանսական արդյունքների, կազմակերպչական և կառուցվածքային հարցերի, ինչպես նաև գլխավոր ասամբլեայի կողմից հանձնարարված հարցերի քննության վերաբերյալ:

Բացի նշված ռազմավարական խնդիրների քննարկումներից, որոնք կարևորվում են ոչ միայն Հայաստանի, այլև համաշխարհային առումով և օգտակար են հետազայում համապատասխան տեխնիկական ստանդարտների ու կանոնակարգերի մշակման համար, վեհաժողովը նաև օգտակար էր նոր ծանոթությունների և համագործակցության առաջարկների ձեռք բերման համար: Մասնավորապես, Հայաստանի պատվիրակությունը առանձնակի հանդիպումներ ունեցավ ԻՍՕ-ի նախագահ Կրն. Ալան Մորիսսոնի, նորընտիր նախագահ Կրն. Բորիս Այոշինի, ԻՍՕ-ի գլխավոր քարտուղար Կրն. Ռոբ Սթիլի, ԴԵՎԿՕ-ի գլխավոր քարտուղար Կրն. Բիեր Բուդուի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Իսպանիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, ԱՄՆ-ի, Սաուդյան Արաբիայի, Իրանի, Հորդանանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Ղազախստանի, Տաջիկստանի, և այլ պատվիրակությունների հետ: Այդ առանձնագրույցների և քննարկումների արդյունքում, մասնավորապես, քննարկվեցին երկուստեք համագործակցության հնարավորությունները:

Ինստիտուտը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է զգալի միջազգային ստանդարտացման տեխնիկական աշխատանքներ: Մասնավորապես, կազմակերպվել են միջազգային ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկության աշխատանքները, որոնց ընթացքում 118 միջազգային ստանդարտների նախագծեր անցել են փորձաքննություն և համաձայնեցվել են ՀՀ-ում բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

Կատարվել են վերլուծական աշխատանքներ նոր ընդունված ԻՍՕ և ԵՆ ստանդարտների ՀՀ-ում կիրառման վերաբերյալ: Նախապատրաստվել են տնտեսության տարբեր ճյուղերի համար միջազգային և եվրոպական ստանդարտների ցանկեր, որոնց կիրառման վերաբերյալ ՀՀ-ում կարծիքներ պետք է հավաքվի բոլոր շահագրգիռ կազմակերպությունների կողմից:

Ինստիտուտն անընդհատ նամակագրության մեջ է գտնվում միջազգային ստանդարտացման կազմակերպության և նրա հանձնաժողովների հետ, ինչպես նաև ստանդարտացման եվրոպական կոմիտեի և նրա հանձնաժողովների հետ, ինչի շնորհիվ արտահայտում է իր պաշտոնական դիրքորոշումն այս կամ այն խնդրի վերաբերյալ:

Միջպետական համագործակցության շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- իրականացվել է միջպետական ընդունման ենթակա փաստաթղթերին (միջպետական ստանդարտներին, դասակարգիչներին և այլ ստանդարտներին, դրանց փոփոխություններին) ՀՀ միանալու մասով էլեկտրոնային քվեարկություն՝ 2010 թվականի ընթացքում թվով 110 հատ,
- ԱՊՀ անդամ-պետությունների ՍԶՍ միջպետական խորհրդի 37-րդ նիստի արձանագրությունով նախատեսված օրացուցային պլանով նախատեսված հանձնարարականների կատարման վերաբերյալ գրությունների նախապատրաստում,
- իրականացվել է մշակված միջպետական նորմատիվ-իրավական փաստաթղթերի նախագծերի փորձաքննություն (համաձայնագրեր, միջպետական ստանդարտացման ստանդարտացման ծրագրեր և այլն):
- ԱՊՀ մասնակից-պետությունների տեխնիկական կանոնակարգերի ներդաշնակեցման հիմունքների մասին համաձայնագրի նախագծի փորձաքննություն և պատասխան գրության նախապատրաստում,

- «Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Միջպետական Խորհրդի գործունեության մասին» ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի որոշման նախագծի փորձաքննություն և պատասխան գրության նախապատրաստում,
- Միջպետական և Ռուսաստանի Դաշնության ստանդարտների ՀՀ-ում գործողությունը դադարեցման ենթակա ստանդարտների ցանկերի նախապատրաստում՝ թվով 853 ստանդարտ,
- ԱՊՀ անդամ-պետությունների ՍՉՍ միջպետական Խորհրդի 38-րդ նիստի արձանագրության հանձնարարականների կատարման դիտարկում:

2.4 ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՈՒՄ

2010 թվականի ընթացքում ստանդարտների ազգային ֆոնդը համալրվել է 1335 միջազգային (ԻՍՕ), 1067 Եվրոպական (ԵՆ), 41 միջպետական (ԳՕՍՍ), 664 Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՍ Ռ) և 80 Հայաստանի Հանրապետության (ՀՍՏ) նոր ստանդարտներով:

Ստանդարտների ազգային ֆոնդի արդիականացման նպատակով 2010 թ. կատարվել է 2100 միավոր ստանդարտի տեխնիկական մշակում (փոփոխություններ, լրացումներ, տեղեկություն չեղյալ հայտարարելու և փոխարինող ստանդարտների մասին) և վերաստուգում ըստ միջպետական ստանդարտի տեղեկատվի և գործող ԱՊՀ երկրների համար տեղեկատվական որոնման համակարգի: Ստանդարտների էլեկտրոնային տարբերակները արխիվացվել են, իսկ թղթի կրիչով ստանդարտները հաշվառման են վերցվել մատյանում:

Ստանդարտացման բաժինը 2010թ-ի ընթացքում իրականացրել է ազգային ֆոնդի վերաստուգման և ուսումնասիրության աշխատանքներ, որի հիմնական նպատակն է հայտնաբերել արդիականությունը կորցրած միջպետական ստանդարտները «ԳՕՍՍ» և դադարեցնել դրանց գործողությունը ՀՀ տարածքում: Հաշվետու ժամանակաշրջանում վերաստուգվել և ուսումնասիրվել է մեքենաշինության ոլորտում օգտագործվող միջպետական ստանդարտները, որի արդյունքում պարզվել է, որ մի շարք ստանդարտներ, որոնք սահմանում են արտադրանքի կառուցվածքը և չափսերը, պահանջարկ չունեն շուրջ 15 տարի մեքենաշինության ոլորտում և կորցրել են իրենց արդիականությունը: Նույնատիպ աշխատանքներ իրականացվել են սննդարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում: Նշված աշխատանքների արդյունքում բաժինը առաջարկել է 2310 միջպետական ստանդարտների գործողությունը դադարեցնել ՀՀ-ում:


Համաձայն «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի և ստանդարտացման ազգային համակարգի հիմնադրույթային ստանդարտների (ՀՍՏ 1.2-2001 և ՀՍՏ 1.3-95) 2010 թ-ի ընթացքում գրանցվել է 55 Հայաստանի Հանրապետության (ՀՍՏ) ստանդարտ և 2 ՀՍՏ-ի փոփոխություն, 253 տեխնիկական պայմաններ և 198 տեխնիկական պայմանների փոփոխություն: Գրանցվել է նաև ազգային ստանդարտների կարգավիճակով 20 միջպետական և ՌԴ ստանդարտներ:

Գծանկար 1-ում ցույց է տրված միջազգային ստանդարտներին ազգային ստանդարտների ներդաշնակեցման մակարդակի դինամիկան 2000-2010թթ. համար:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև 1993-2010թթ. համալրված ազգային ստանդարտների Ֆոնդի կառուցվածքը ըստ տնտեսության տարբեր ճյուղերի, որը պատկերված է գծանկար 2-ում:


Գծանկար 1.

Ազգային ստանդարտների ներդաշնակեցումը միջազգային ստանդարտներին (ԻՍՕ, ԻԷԿ, ԵՆ), տոկոսներով



Գծանկար 2.

1993-2010թթ. համալրված ազգային ստանդարտների Ֆոնդի կառուցվածքը



Ինստիտուտում գործող «Ստանդարտ» տեղեկատվական որոնման համակարգը ներկայումս արդիականացման կարիք ունի, քանի որ այն ծառայում է միայն որպես կատալոգ և հնարավորություն չի տալիս պատկերացում կազմել օրինակ գտնված ստանդարտի բովանդակության վերաբերյալ, գտնել տվյալ ստանդարտում այլ ստանդարտների վրա կատարված հղումները և այլն: Ինստիտուտի կողմից, մասնավորապես ուսումնասիրվել են այլ երկրների ստանդարտների ինստիտուտներում ներդրված ստանդարտների որոնման էլեկտրոնային ծրագրերը: 2010թ. սեպտեմբերի 23-ին Ինստիտուտի աշխատակազմի ղեկավար Գ.Նազարյանը նախնական պայմանավորվածության համաձայն այցելել է Ավստրիայի ստանդարտների ազգային ինստիտուտ, որտեղ կազմակերպվել է ստանդարտների որոնման և տեղեկատվական ավստրիական էլեկտրոնային ծրագրերի մանրամասն ներկայացում: Ավստրիական ծրագիրը ներկայումս եզակիներից է աշխարհում իր համընդգրկունությամբ ու ամբողջականությամբ: Այն կողմնորոշված է բոլոր ոլորտների շահագրգիռ կողմերի (արդյունաբերություն, հասարակական կազմակերպություններ, պետական մարմիններ, կրթական և գիտական հաստատություններ և այլն) պահանջների բավարարմանը:

Ներկայումս Ինստիտուտում զգալի աշխատանքներ են տարվում ստանդարտների ազգային ֆոնդում առկա բոլոր ստանդարտների թվայնացման ուղղությամբ և ձևավորվում է ստանդարտների էլեկտրոնային բազան, որի հիման վրա պետք է ծրագրավորվի, կազմավորվի և ներդրվի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի էլեկտրոնային գրադարանը: Էլեկտրոնային գրադարանը պետք է ընդգրկի ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում գործող, այլև չեղյալ հայտարարված, գործողությունը դադարեցված կամ դեռևս չընդունված բոլոր միջազգային, միջպետական և եվրոպական ստանդարտները: Էլեկտրոնային գրադարանը թույլ կտա խթանել ստանդարտների վաճառքը՝ առցանց վաճառքի ներդրման միջոցով: Հնարավոր կլինի նաև գրադարանը տեղակայել Ինստիտուտի Գյումրու, Վանաձորի և Կապանի բաժանմունքներում՝ բարելավելով ստանդարտների ձեռք բերման մատչելիությունը: Հետագայում հնարավոր կլինի նաև էլեկտրոնային գրադարանի ներդրումը հանրապետության խոշոր ԲՈՒՀ-երում և գիտահետազոտական ինստիտուտներում: Ելնելով աշխատանքների մեծ ծավալից, ինչպես նաև մատչելի ֆինանսավորման մակարդակից, նախատեսվում է ստանդարտների էլեկտրոնային գրադարանը գործարկել 2012թ. սկզբներին:

2010 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության գործատուներին և մասնագետներին սպառիչ տեղեկատվություն ապահովելու համար հրատարակվել է «ՀՀ ստանդարտների 2010 թվականի կատալոգը» և «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» 2009- N 4 և 2010 N 1, N 2, N 3 եռամսյակային տեղեկատուները, ինչպես նաև N 1, N 2, N 3, N 4, N 5, N 6 տեղեկատվական թերթիկները, որոնք տրամադրվել են Ինստիտուտի բոլոր բաժանորդներին:

2.5 ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

2010թ.-ին ինստիտուտն ստանդարտացման և համապատասխանության գնահատման բնագավառում իրականացրել է 56 ՀՀ կազմակերպությունների համար տեղեկատվական բաժանորդային սպասարկում:

Ստանդարտացման և համապատասխանության գնահատման բնագավառում տեղեկատվական բաժանորդային սպասարկման նպատակով կազմակերպությունների հետ 2010թ.-ին կնքվել են 51 պայմանագրեր՝ 7382,0 հազ. դրամի: Կատարված աշխատանքների արդյունքում կազմվել է աշխատանքների հանձնման-ընդունման 58 ակտ՝ **7320,0 հազ. դրամի**, հետևյալի մասով.

- տեղեկատվության տրամադրում ազգային ֆոնդում միջազգային (ԻՍՕ, ԻԷԿ, ԵՆ), միջպետական (ԳՕՍՏ), Հայաստանի Հանրապետության (ՀՍ) և արտասահմանյան երկրների (այդ թվում՝ ԱՊՀ) ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի մասին,
- կազմակերպությունների ստանդարտների ֆոնդի արդիականացում,
- ՀՀ ստանդարտների ամենամյա կատալոգի, ստանդարտների և տեխնիկական պայմանների եռամսյակային տեղեկատուների տրամադրում,
- բաժանորդին անհրաժեշտ ազգային ստանդարտների անվճար տրամադրում (թվով 20),
- խորհրդատվություն ստանդարտացման և համապատասխանության գնահատման փաստաթղթերի վերաբերյալ:

Ինստիտուտի կողմից իրականացվել է նաև տեղեկատվական սպասարկում ՀՀ պետական կառավարման մարմիններին, բոլոր կազմակերպություններին, ֆիզիկական անձանց և ստանդարտների ազգային ինստիտուտի ստորաբաժանումների շուրջ 3810 դիմողների համար: Նշված աշխատանքները իրականացվել են պետպատվերի շրջանակներում:


Ստանդարտների վաճառքը իրականացվում է պայմանագրային հիմունքներով ըստ հաստատված գնահաշվարկի և տրված հաշիվ-ապրանքագրի կամ անդորրագրի: Ազգային ստանդարտների վաճառքի դեպքում կազմակերպության կողմից ներկայացվում է անհրաժեշտ ստանդարտների գնման հայտ և կնքվում է պայմանագիր:

2010թ.-ին իրականացվել է ստանդարտների վաճառք ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին՝ **1711,3 հազ. դրամի**:

Ընդհանուր առմամբ, բաժանորդային և անհատական սպասարկման եղանակներով ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռներեցների վաճառված ստանդարտներից 2010թ. հասույթը կազմել է **9031.3 հազ. դրամ**: Միաժամանակ, պետական պատվերի շրջանակներում ՀՀ պետական կառավարման մարմիններին տրամադրվել է 35 միջազգային, միջպետական և ՀՀ ազգային ստանդարտներ, ընդհանուր 923000 դրամի: Հաշվետու ժամանակաշրջանում ստանդարտների վաճառքի ծավալները նախորդ տարվա համեմատ նվազել է մոտ 13%-ով: ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2007-2010թթ. քանակական և գումարային դինամիկան ներկայացված է գծանկարներ 3-ում և 4-ում:


Գծանկար 3.

ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2007-2010թթ. քանակական դինամիկան



Գծանկար 4.

ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2007-2010թթ. գումարային դինամիկան, հազ. դրամ



Ինչպես երևում է վերը պատկերված ստանդարտների վաճառքի դինամիկայից, ստանդարտների վաճառքը զգալի անկում է արձանագրել: Նշված հանգամանքը պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպիսիք են տնտեսական ակտիվության անկումը, վաճառքի ցածր մատչելիությունը, ցածր իրազեկվածությունը և այլն:

2010թ-ին ինստիտուտը շարունակել է տեխնիկական պայմանների մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցումը, որի հիմնական նպատակն է օգնել միջին և փոքր ձեռնարկություններին և անհատ ձեռնարկատերերին մշակել կոնկրետ տեսակի արտադրանքի համար տեխնիկական պայմաններ՝ համաձայն գործող նորմատիվ իրավական փաստաթղթերի և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտների պահանջներին:

Տեխնիկական պայմանների և դրանց փոփոխությունների մշակման խորհրդատվական ծառայություններ են մատուցվել 296 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար, որից հասույթը կազմել է **11845,0 հազ. դրամ**: Համեմատության համար, 2009 թվականին 349 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար նշված ծառայություններից հասույթը կազմել է 9870,4 հազ. դրամի:

2010 թվականին պետական գրանցման ներկայացված 355 տեխնիկական պայմաններ և 198 տեխնիկական պայմանների փոփոխություններ ենթարկվել են փորձաքննության և գրանցվել են, որի հիմնական նպատակն է համապատասխանեցնել կազմակերպության նորմատիվ փաստաթուղթը Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը, տեխնիկական կանոնակարգերին և ազգային ստանդարտներին: Այդ աշխատանքներից ստացված հասույթը կազմել է **14165,7 հազ. դրամ** (2009թ.՝ 15724,2 հազ. դրամ):

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտն ապահովել է Առևտրի համաշխարհային կազմակերպության Հայաստանի Հանրապետության հարցման կետի գործունեությունը, որը ԱՀԿ անդամ մի շարք երկրներից (Իտալիա, Լեհաստան, Ֆրանսիա, Չինաստան, Ճապոնիա, Ուկրաինա և Բելոռուս) ստացել է 24 հարցում՝ ներմուծվող արտադրատեսակների համար գործող տեխնիկական կանոնակարգերի ու համապատասխանության հավաստման ընթացակարգերի մասին և նախապատրաստել է հարցման պատասխաններ:

3. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ 2010Թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ էկոնոմիկայի նախարարության հավատարմագրման գործակալություն ներկայացրեց Գյումրու և Վանաձորի փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա ՀՀ հավատարմագրման խորհուրդը որոշում կայացրեց Գյումրու փորձարկման լաբորատորիայի 3 տարի ժամկետով և Վանաձորի փորձարկման լաբորատորիայի 2 տարի ժամկետով հավատարմագրման վերաբերյալ: Արդյունքում ներկայումս Ինստիտուտում գործում են 6 հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներ, այդ թվում՝

1. Երևանի փորձարկման լաբորատորիան,
2. Երևանի ռադիոէլեկտրոնային սարքավորումների փորձարկման լաբորատորիան,
3. Երևանի ֆիզիկաքիմիական փորձարկման լաբորատորիան
4. Երևանի նավթամթերքների փորձարկման լաբորատորիան,
5. Գյումրու փորձարկման լաբորատորիան,
6. Վանաձորի փորձարկման լաբորատորիան:

Ինստիտուտի կազմում գտնվող բոլոր լաբորատորիաները գործում են «Լաբորատոր փորձարկումների կենտրոն» ստորաբաժանման կազմում: Նշվածը թույլ է տալիս կենտրոնացված ձևով կազմակերպել բոլոր անհրաժեշտ լաբորատոր նյութերի և ծախսերի իրականացումը, օպտիմիզացնել առկա լաբորատոր սարքերի օգտագործումը և կենտրոնացված ձևով համակարգել լաբորատոր փորձարկումների իրականացման որակը ու պահանջները: Այդուհանդերձ, գործող լաբորատորիաներում տարվում է նաև փորձարկումների առանձնացված հաշվառում և յուրաքանչյուր լաբորատորիայի համար նշանակված են պատասխանատու կատարողներ, որոնք պատասխանատվություն են կրում փորձաքննությունների ճշգրտության և արդյունքների համար:

3.1 ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Հաշվետու ժամանակաշրջանում ռադիոէլեկտրոնային սարքավորումների փորձարկման լաբորատորիան ներկայումս հանրապետությունում ըստ հավատարմագրված ոլորտների ամենահագեցված ու արդիական լաբորատորիան է: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ լաբորատորիայի միջոցով փորձարկումների պահանջարկը անընդհատ անկում է ապրում, ինչը պայմանավորված է հիմնականում պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների ցանկի կրճատման պատճառով: 2010թ. ընթացքում լաբորատորիան իրականացրել է 188 փորձարկում, իսկ 2009թ.՝ 212 փորձարկում:

3.2 ՄՆԵԴԻ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

Երևանի փորձարկման լաբորատորիան հանրապետությունում ամենաարդիական ու միջազգային չափանիշներին համապատասխանող բարձրակարգ սարքավորումներով հագեցված լաբորատորիաներից է: Գյումրու և Վանաձորի փորձարկման լաբորատորիաների հագեցվածությունը և հնարավորությունները համեմատաբար առավել թույլ են, առկա են

հնամաշ սարքավորումներ, որոնք փոխարինման կարիք են զգում: Հաշվետու ժամանակաշրջանում հաջողվել է բարեկարգել Գյումրու փորձարկման լաբորատորիայի տարածքը, իսկ Վանաձորի փորձարկման լաբորատորիայի տարածքի բարեկարգումը նախատեսվում է հնարավորության դեպքում (կապված համապատասխան ֆինանսավորման առկայությունից) բարեկարգել 2011թ. ընթացքում: Թեև տարածքային լաբորատորիաների կողմից իրականացվող փորձարկումների ծավալները փոքր են, այդուհանդերձ դրանք միակն են և մեծ կարևորություն ունեն իրենց տարածքներում:

Հաշվետու ժամանակաշրջանում Երևանի փորձարկման լաբորատորիայի կողմից տրվել է սննդամթերքների և ոչ պարենային ապրանքների 1339 (2009թ.՝ 1509), Գյումրու ՓԼ՝ 731 (2009թ.՝ 680), իսկ Վանաձորի ՓԼ՝ 414 (2009թ.՝ 277) փորձարկման արձանագրություններ:

Լաբորատորիաների խնդիրներից է բարձրակարգ ու երիտասարդ մասնագետների պակասը, որոնց ներգրավումը խոչընդոտվում է ցածր աշխատավարձերով: Բացի այդ, լաբորատոր փորձարկումների գները և փորձարկումների առկա պահանջարկը բավականաչափ բարձր չեն, որպեսզի կարողանան ծածկել անհրաժեշտ կապիտալ ծախսերը:

Լուրջ խնդիր է նաև փորձարկման առկա սարքավորումների օգտագործման գծով անձնակազմի ուսուցման կազմակերպումը, ինչի համար կարիք կա ներգրավելու միջազգային փորձագետների: Լաբորատոր նյութերի ձեռք բերումը ևս խնդիրներ է առաջացնում, քանի որ մեծամասամբ կարիք է առաջանում բարձրակարգ նյութերը ներմուծել արտասահմանից:

3.3 ՆԱՎԹԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

Այս երկու լաբորատորիաները տեղակայված են միևնույն՝ ք.Երևան, Հ.Էմինի 31ա տարածքում: Դրանք ունեն միջին բավարար հագեցվածություն, ինչը թույլ է տալիս պատշաճ ձևով իրականացնել նավթամթերքների համար սահմանված պահանջների փորձարկումները: Հարկ է նկատել, որ նավթամթերքների փորձարկման առումով այս լաբորատորիաները հանրապետությունում զբաղեցնում են մենաշնորհային դիրք, քանի որ նման բարձր կարգի որևէ այլ լաբորատորիա հանրապետությունում հավատարմագրված չէ:

Հաշվետու տարում նավթամթերքի փորձարկման լաբորատորիայում կատարվել է 1178 փորձարկում, որից 102-ը՝ բենզինի, 252-ը՝ դիզելային վառելիքի, 647-ը՝ յուղերի, իսկ 177-ը՝ այլ տիպի նավթամթերքի համար: Ֆիզիկաքիմիական լաբորատորիայում կատարվել է 176 պարարտանյութերի փորձարկում:

2010թ.-ին հաջողվել է նաև որոշակիորեն բարեկարգել լաբորատորիաների տարածքը, ամրացվել և վերանորոգվել է մասնաշենքի տանիքը, լաբորատոր սարքավորումները միացվել են հողանցման կոնտուրի հետ:

Այդուհանդերձ, լաբորատորիաները լրացուցիչ վերազինման կարիք ունեն, ինչը պահանջում է խոշոր կապիտալ ծախսերի իրականացում: Այսպես, Ստանդարտների ազգային ինստիտուտի նավթամթերքների սերտիֆիկացման մարմինը և փորձարկման լաբորատորիան մինչև 2008թ. նոյեմբերի 1-ն ի վիճակի են եղել ապահովելու ՀՀ կառավարության 11.11.2004թ. թիվ 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների» տեխնիկական կանոնակարգի պահանջները, որով սակայն նախատեսված է խստացնել

բենզինում և դիզելային վառելիքում ծծմբի պարունակության չափանիշը: Այդ նպատակով, 2008թ. նոյեմբերի 1-ից մինչև 2010թ. հունվարի 1-ը բենզինում և դիզելային վառելիքում ծծմբի պարունակության առավելագույն ցուցանիշը սահմանվում է 50մգ/կգ, իսկ 2010թ. հունվարի 1-ից՝ 10մգ/կգ: Այդ ճշգրտությամբ չափումներ իրականացնելու համար Ստանդարտների ազգային ինստիտուտը ներկայումս չունի համապատասխան սարք, որի շուկայական արժեքը կազմում է 40000-100000 Եվրո: Հասկանալի է նաև, որ ընկերությունն ի վիճակի չէ իր վրա վերցնելու այդպիսի ծախսի իրականացումը, քանի որ նման սարքավորման ձեռքբերման դեպքում հետզնման ժամկետը կկազմի մոտ 15 տարի, հաշվի առնելով փորձարկումների առկա ծավալները: Ինստիտուտի տնօրինությունը 2009 և 2010թթ. ընթացքում խնդիրը մի քանի անգամ ներկայացրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարին, առաջարկելով նախարարության հաշվեկշռին գտնվող, սակայն ներկայումս որևէ կերպ չօգտագործվող «Սպեկտրոսկան Ս» ծծմբի որոշման սարքն օգտագործման իրավունքով տրամադրել Ինստիտուտին: Սակայն մինչ այժմ այդ խնդիրն որևէ լուծում չի տրվել:

Լաբորատորիաների վերազինման մյուս կարիքներն են՝

1. Անհրաժեշտ է ձեռք բերել նավթամթերքի սառեցման, բյուրեղացման և պղտորման ջերմաստիճանն առավել ճշգրիտ որոշող «ՊԱ3-93Մ» մակնիշի ավտոմատ սարք, որի շնորհիվ կվերանա ամսական 25կգ հեղուկ ազոտի ձեռք բերման անհրաժեշտությունը:
2. Հաշվի առնելով, որ ՄԻՏ 65 օկտանային թիվ որոշող սարքավորման սպասարկումը և դիզելային վառելիքներում ցետանային թվի որոշումն առաջ են բերում լրացուցիչ բարդություններ, ներկայումս անհրաժեշտ է ձեռք բերել SHATOX-200 սարքավորումը, որի միջոցով հնարավոր է որոշել թե՛ բենզինների օկտանային թիվը, թե՛ դիզելային վառելիքի ցետանային թիվը:
3. Անհրաժեշտ է ձեռք բերել բենզիններում բենզոլի և արոմատիկայի որոշման համար բարձր արդյունավետությամբ փորձարկումներ իրականացնող քրոմատոգրաֆ:
4. Պարարտանյութերում կալիումի որոշման համար անհրաժեշտ է ձեռք բերել բոցային ֆոտոմետր (ՊՓՄ6, ՊՓ-1016, ՊՓԱ կամ որևէ այլ մակնիշի):


4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ 2010Թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կազմում հավատարմագրված սննդի և պարենային հումքի, ոչ պարենային ապրանքների, ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները (ՍՄ) շարունակել են իրականացնել համապատասխանության հավաստման աշխատանքներ: Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների գործունեության ծավալներն շարունակում են գերակայել հանրապետությունում հավատարմագրված այլ ՍՄ նկատմամբ:


2010թ. պարենային և ոչ պարենային ապրանքների գծով համապատասխանության հավաստման աշխատանքների ծավալները որոշակի աճ են արձանագրել: Հետաքրքիր է դիտարկել անցած տարիների դինամիկան: Այսպես, 2007թ. Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից տրվել են 6107 համապատասխանության սերտիֆիկատ, 2008թ.՝ 5987, 2009թ.՝ չնայած Գյումրու, Վանաձորի, Կապանի և Օկտան թեստ սերտիֆիկացման մարմինների միացմանը, կազմել է ընդամենը 3765, իսկ 2010թ.՝ 4226 համապատասխանության սերտիֆիկատ: Հանրապետությունում տրված համապատասխանության սերտիֆիկատների թվաքանակի դինամիկայի համաձայն, 2007թ. հանրապետությունում տրվել է 10916 սերտիֆիկատ, 2008թ.՝ 11680, 2009թ.՝ 5676, իսկ 2010թ.՝ 8935 համապատասխանության սերտիֆիկատ: Սերտիֆիկացման ծավալների վրա իր ուրույն ազդեցությունն ունեցավ ՀՀ կառավարության 28.08.2008թ. թիվ 976-Ն որոշմամբ պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների ցանկի կրճատումը, ինչպես նաև մասնավոր սերտիֆիկացման մարմինների գործունեությունը: Միաժամանակ, պայմանավորված ՀՀ կառավարության 9.12.2010թ. թիվ 1599-Ն որոշմամբ, համաձայն որի համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի սերտիֆիկացման պահանջը մաքսազերծման փուլից տեղափոխվեց իրացման փուլ, 2011թ. ակնկալվում է սերտիֆիկացման աշխատանքների ծավալների հետագա կրճատում՝ մոտ 30%-ով: Նշված կանխատեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ շատ գործարարներ ներկրված մեկ խմբաքանակ արտադրանքի համար տրված սերտիֆիկատն այնուհետև կիրառում են այլ խմբաքանակների համար ևս, խուսափելով նոր սերտիֆիկատի ձեռք բերումից:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև համապատասխանության հավաստման բոլոր աշխատանքների գծով առկա պատկերը և դրա փոփոխությունը վերջին երեք տարիների ընթացքում: Գծանկար 5-ում ներկայացված է հանրապետության բոլոր սերտիֆիկացման մարմինների կողմից կատարված համապատասխանության հավաստման բոլոր տեսակների աշխատանքների թվաքանակի դինամիկան 2007-2010թթ. համար, իսկ գծանկար 6-ում պատկերված է Հայաստանում հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների կողմից 2010թ. իրականացված համապատասխանության հավաստման բոլոր տեսակի աշխատանքների (սերտիֆիկատ, հայտարարագիր, մաքսային օրինակ և այլն) տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում:

Համապատասխանության հավաստման աշխատանքների դինամիկան Հայաստանում 2007-2010թթ.



Հայաստանում հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների կողմից 2010թ. իրականացված գործունեության տեսակարար կշիռը ընդհանուր համապատասխանության հավաստման աշխատանքների ծավալում



Ինչպես երևում է գծանկար 6-ից, թեև ընդհանուր առմամբ համապատասխանության հավաստման ոլորտում 2010թ.-ին հավատարմագրված են եղել և գործունեություն են իրականացրել 14 ընկերություններ, այդուհանդերձ ոլորտի գերակշիռ մասը՝ 71% բաժին է ընկնում Ստանդարտների ազգային ինստիտուտին: Մյուս խոշոր ընկերությունները 20% մասնաբաժնով «Մավաս Գրուպ» ՍՊԸ-ն է և մոտ 6% մասնաբաժնով «Նարեկ» ՍՊԸ-ն է: Մնացած բոլոր ընկերություններին բաժին է ընկել սերտիֆիկացման աշխատանքների ընդհանուր ծավալի 3%-ը:

4.1 ՊԱՐԵՆԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում տրվել են՝

ա) ոչ պարենային ապրանքների գծով՝

1979 ներմուծվող արտադրանքի և 72 տեղական արտադրության համապատասխանության սերտիֆիկատ (ընդամենը՝ 2051),

1130 համապատասխանության հայտարարագիր,

իրականացվել է 35 համապատասխանության հսկողություն,

կատարվել է տեխնիկական պայմանների 33 փորձաքննություն,

մերժվել է 9 հայտ:

Ոչ պարենային ապրանքների սերտիֆիկացման գծով 2010թ. արձանագրվել է աճ՝ 2009թ. համեմատ, մասնավորապես՝ 2009թ. տրվել էր 1803 սերտիֆիկատ և 837 հայտարարագիր:

բ) սննդի և պարենային հումքի գծով տրվել են՝

2175 (2009թ.՝ 1958) համապատասխանության սերտիֆիկատ, այդ թվում՝ 1884 ներկրվող արտադրանքի և 291 տեղական արտադրության համար.

812 (2009թ.՝ 589) համապատասխանության հայտարարագիր, այդ թվում՝ 595 ներկրվող արտադրանքի և 217 տեղական արտադրության համար:

Համապատասխանության հսկողություն է իրականացվել 64 կազմակերպություններում, ընդունվել են դադարեցման և կասեցման 33 որոշումներ, կատարվել է 47 տեխնիկական պայմանների փորձաքննություն:

Փաստորեն, սննդի և պարենային հումքի գծով սերտիֆիկացման աշխատանքների ծավալը ևս աճ է արձանագրել նախորդ տարվա համեմատ:

գ) ծառայությունների սերտիֆիկացման գծով՝

տրվել է սննդի ապահովման ծառայության 329 (2009թ.՝ 486) համապատասխանության սերտիֆիկատ,

211 (2009թ.՝ 234) ընկերություններում կատարվել է սննդի ապահովման ծառայության համապատասխանության հսկողություն:

Այսպիսով, ծառայությունների սերտիֆիկացման ոլորտում նկատվել է սերտիֆիկացման ծավալների որոշակի նվազում: Ընդ որում, այդ նվազումը տեղի է ունեցել ոչ միայն Ինստիտուտի, այլ՝ ընդհանուր հանրապետության մակարդակով: Այսպես, 2009թ.

հանրապետությունում տրվել է 676 ծառայությունների համապատասխանության սերտիֆիկատ, իսկ 2010թ.՝ 525:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է սերտիֆիկացման մարմինների փորձագետների վերապատրաստման ու որակավորման գործընթացը, ինչի շնորհիվ ապահովվել է համապատասխան կրթությամբ որակավորված մասնագետների կողմից բարձրակարգ ծառայությունների մատուցումը հաճախորդներին:

4.2 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից կատարվել է 11 (2009թ.՝ 12) կազմակերպությունների որակի կառավարման համակարգի և 2 (2009թ.՝ 2) կազմակերպությունների էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներ: 22 կազմակերպությունում իրականացվել են համապատասխանության հսկողության աշխատանքներ, ինչպես նաև 10 կազմակերպությունում իրականացվել են որակի կառավարման համակարգի սերտիֆիկատների վերաձևակերպում:

Կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի հինգ փորձագետներ (աուդիտորներ) անցել են «Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգեր՝ ԻՍՕ 22000» մասնագիտական դասընթացը, մասնակցել են փորձագետների որակավորման քննություններին և ԻՍՕ 19011 ստանդարտի պահանջներով որակավորվել են որպես «Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի» աուդիտորներ: Այդուհանդերձ, ԻՍՕ 22000 ստանդարտին համապատասխան սերտիֆիկացման աշխատանքների իրականացումը, չնայած կազմակերպությունների շրջանում առկա մեծ պահանջարկին, դեռևս անհնարին է, քանի որ Ինստիտուտը չի հավատարմագրվել այդ ոլորտով: Հավատարմագրման գործակալությունը հրաժարվում է այդ ոլորտում իրականացնել հավատարմագրում, քանի որ դա նախատեսված չէ «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքով: Նշված հանգամանքը խոչընդոտում է ՀՀ սննդի ոլորտում աշխատող կազմակերպությունների համար ԻՍՕ 22000 սերտիֆիկացման աշխատանքների իրականացումը, միաժամանակ զրկելով նրանց արտաքին շուկաներում մրցակցային առավելություններ ունենալու հնարավորությունից:

Հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել ու լրամշակվել է արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության ամենամյա մրցանակաբաշխության մեթոդաբանությունը, նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Ներկայումս Ինստիտուտի կողմից աշխատանքներ են տարվում՝

ա) կազմակերպությունների էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքների ակտիվացման և համապատասխան իրազեկության ապահովման ուղղությամբ,

բ) բաժնի աշխատակիցների որակավորման բարձրացման ուղղությամբ՝ նրանց միջազգային չափանիշներին համապատասխանող դասընթացներին մասնակցության ու ԻՌԿԱ-ում որպես աուդիտորներ գրանցման միջոցով:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ամփոփելով 2010թ-ին Ինստիտուտի Ուսումնական կենտրոնում իրականացված աշխատանքները, արձանագրվում է հետևյալը:

Կենտրոնի ուսումնամեթոդական բազայի հիմնովին վերանայման արդյունքում ստեղծվել են դասընթացների արդիական թեմատիկ պլաններ և ուսումնական ծրագրերի բանկ: Հիմնվելով ունկնդիրների կարիքների և պահանջարկի վերլուծության արդյունքների վրա մշակվել են 45 անվանում դասընթացների թեմատիկ պլաններ և ծրագրեր, որոնք նախատեսում են նյութի ներկայացման և մատուցման արդիական մեթոդներ, միջոցներ ու գործիքներ: Մշակված թեմատիկ պլանները և ծրագրերը քննարկվել ու հաստատվել են ինստիտուտի տնօրենի կողմից: Վերանայման է ենթարկվել առաջարկվող դասընթացների կազմը ու կառուցվածքը: Պատրաստվել է նոր 2011թ. դասընթացների ցանկ, որը զետեղված է SARM-ի վեբ-կայքում (www.sarm.am):

2010թ-ի ընթացքում 21 խմբերում ընդգրկված ՀՀ 67 կազմակերպություն ներկայացնող 199 ունկնդրի համար կազմակերպվել են ընդհանուր, ներածական, մասնագիտական և լրացուցիչ մասնագիտական դասընթացներ: Թրեյնինգներն անցկացվել են, ինչպես դասախոսությունների միջոցով՝ սլայդների ցուցադրմամբ, այնպես էլ ինտերակտիվ մեթոդներով՝ գործնական խաղեր, իրավիճակների վերլուծություններ, քննարկումներ, դերախաղեր, «ուղեղային գրոհներ» և այլն: Գիտելիքի ամրապնդման և ներկայացվող նյութը մատչելի դարձնելու նպատակով, ունկնդիրներին տրամադրվել են նորմատիվ-մեթոդական փաստաթղթերի փաթեթներ: Ուսուցումն ավարտվել է թեսթավորումներով, որոնց հիման վրա մասնակիցներին տրվել են վկայականներ:

Հաշվետու տարում՝ նախորդ 2009թ. համեմատ աճել է հայտատու կազմակերպությունների թիվը (45-ի փոխարեն 67) և դրանք ներկայացնող ունկնդիրների թիվը (180-ի փոխարեն շուրջ 200):

2010թ-ի ընթացքում Կենտրոնի միջոցով կազմակերպվել և անցկացվել է 4 թեսթավորում և 4 հարցազրույց: Համապատասխանության գնահատման բնագավառի փորձագետի թեսթավորում են անցել 38 հավակնորդ, որոնց 37-ին հանձնվել է տարբեր ոլորտների փորձագետների 55 վկայագիր: Որակավորման քննություններն անհաջող հանձնելու պատճառով մերժվել է 10 վկայագրի տրամադրում:

2010թ-ի ընթացքում Կենտրոնի գործունեությունը և դասընթացների մակարդակը գնահատվել է ունկնդիրների կողմից: Թրեյնինգների արդյունքների գնահատման թերթիկների ամփոփումը թույլ է տվել արձանագրելու ունկնդիրների պահանջմունքների բավարարվածություն 98,5 %-ով, ունկնդիրների առաջարկներին տրվել է 100% ընթացք և լուծումներ, որոնք Կենտրոնի ընդունած ՈՐԱԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐ-ով ամրագրված ցուցանիշների կատարումն են:

Այդուհանդերձ, Կենտրոնում առկա են հետևյալ խնդիրները.

- Կենտրոնի անձնակազմի համալրում մասնագետ-թրեյներներով, որոնք պետք է տիրապետեն թրեյնինգների միջազգայնորեն ընդունված գործիքներին և մեթոդներին,

- միջազգային թրեյներների միջոցով Կենտրոնի անձնակազմի իրազեկում թրեյնինգների փորձին և նորամուծություններին,
- Կենտրոնի ճանաչման և վարկանիշի բարձրացման նպատակով տարբեր ոլորտների ունկնդիրների համար տեղեկատվական սեմինարների, քննարկումների սկիզբ դրված գործընթացների շարունակում,
- ունկնդիրների պահանջարկի և առաջարկների, գնահատականների հիման վրա թրեյնինգների ուսումնամեթոդական բազայի կատարելագործում,
- Կենտրոնի բոլոր գործընթացների շարունակական բարելավում:


6. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2010Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գծանկար 7-ում պատկերված է Ինստիտուտի գործունեությունից ստացված հասույթի դինամիկան 2007-2010թթ. համար: Ինչպես պարզ երևում է գծանկարից, Ինստիտուտի հիմնական գործունեությունից ստացվող ընդհանուր հասույթը 2007-2009թթ. ընթացքում անկման միտում է ունեցել, որը հաշվետու 2010թ. ընթացքում հաջողվել է կանխել և ապահովել մոտ 3%-ոց աճ: Ընդ որում, եկամուտների նվազումը հիմնականում պայմանավորված է եղել պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների ցանկի կրճատմամբ:

Եկամուտների նվազման մյուս գործոնը ՀՀ պետական բյուջեից ստանդարտացման նպատակներով տրամադրվող գումարների կտրուկ կրճատումն է, որը 2007-2008թթ. 41 մլն. դրամից 2009թ. նվազել է 18 մլն դրամի, իսկ 2010թ.¹ 14 մլն դրամ: Հարկ է նշել, որ 2007-2010թթ. ընթացքում Ինստիտուտի կողմից առաջարկվող ծառայությունների գները որևէ լուրջ փոփոխության չեն ենթարկվել: Միաժամանակ, 2009թ.-ին Ինստիտուտին մի շարք ընկերությունների միացման հետևանքով Ինստիտուտին անցած անբարվոք վիճակում գտնվող լրացուցիչ շենքային ու տարածքային ենթակառուցվածքները նպաստել են վարչատնտեսական բնույթի ծախսերի աճին, որոնք ուղղված են եղել այդ տարածքների փոքր-ինչ բարեկարգմանը:

Գծանկար 7.

Ստանդարտների ազգային ինստիտուտի հիմնական գործունեությունից ստացված համախառն եկամտի 2007-2010թթ. դինամիկան, միլիոն դրամ¹



Հարկ է նշել, որ չնայած 2010թ. Հայաստանում արձանագրված ցածր տնտեսական աճին և տնտեսության ակտիվությանը, Ինստիտուտի հասույթի վրա ազդող բոլոր ռիսկային ու բացասական գործոններին, ընկերությանը հաջողվել է պահպանել բարձր կենսունակությունը, չստեղծել և չկուտակել պարտավորություններ և 2010թ.-ին ապահովել շուրջ 5,5 մլն. դրամի

¹ Գծանկարում հաշվի չի առնված այլ ոչ գործառնական գործունեությունից ստացված եկամուտը:

շահույթ: 2010թ. ֆինանսատնտեսական գործունեության մանրամասն արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

**Ստանդարտների ազգային ինստիտուտի
2010թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները, հազար դրամ**

Ուղղությունը	Հասույթ	Ծախս	Օգուտ(+)/ վնաս(-)
Սննդամթերքի սերտիֆիկացման ծառայություն	48490.9	23073.7	25417.2
Ոչ պարենային ապրանքների սերտ. ծառայութ.	32132.9	14878.6	17254.3
Փորձարկման լաբորատորիա	37783.1	18622.5	19160.6
Ռադիոէլեկտ. սարքավորումների լաբորատորիա	4033.4	3528.9	504.5
Ծառայությունների սերտիֆիկացման բաժին	17598.3	13877.8	3720.5
Որակի և էկոլոգական համակարգերի սերտիֆ.	21625	14861.1	6763.9
Ստանդարտացում	57435.1	34223.7	23211.4
Ուսումնական կենտրոն	8103.4	5388.7	2714.7
Նավթամթերքների սերտիֆիկացում և փորձարկում	63349.7	21389.3	41960.4
Գյումրու ստորաբաժանում	27270.5	14757.3	12513.2
Վանաձորի ստորաբաժանում	12790.8	6749.5	6041.3
Կապանի ստորաբաժանում	4869.4	5484.6	-615.2
Վարչական		173371.6	-173371.6
Այլ ոչ գործառնական գործունեությունից	34064	13851	20213
ԸՆԴԱՄԵՆԸ	369546.5	364058.3	5488.2